

ՄՈՎԱՅԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Հ. Ա. ՍՈՄՈՆՅԱՆ

Հայ գրականության հնագույն, մասնավորապես սկզբնավորման շրջանի պատմության և 1500-ամյա գրական ողջ ընթացքի նախահիմքերի գիտական փմացության համար, անկասկած, առաջնահերթ նշանակություն է ստանում Մովսես Խորենացու՝ ազգության հոգևոր և քաղաքական մտքի մեծագույն կազմակերպիչ, հայրենասերի, քաղաքագետի, պատմաբանի, թարգմանչի հոսթ-կու կերպարի, հատկապես նրա պատմագիտական հայեցակետերի աշխարհի համակողմանի քննությունը:

Արդ, խոսել Խորենացու մասին, նշանակում է փորձ անել մոտենալու մի առեղծվածային հանճարի, որը հարյուրամյակներ շարունակ զբաղեցնում է հայերի ու օտարների, գիտնականների ու ընթերցողների, անցյալ ու ներկա սերունդների միտքը: Ինչպես ամեն մի հանճարի, այնպես էլ այս հանճարին ու նրա պատմական առաքելությունը հավանալու համար անհրաժեշտ է անդադադունալ երեք իրողություն՝ Խորենացու ժամանակը, Խորենացու իդեալը, Խորենացու գործը, որոնց մասին մեր թեմայի սահմաններում կոսսք կլինի ստորև:

V դարը հայ ժողովրդի քաղաքական, մտավոր և մշակութային կյանքում նշանակալից մի ժամանակաշրջան էր, աննախադեպ զարթոնքի հարյուրամյակ՝ սկիզբների: Սկիզբը՝ Վերելքի ուղին նախանշվում էր հենց դարակազմիչ՝ պատմաքաղաքական և մշակութային հեղաբեկիչ երևույթով՝ հայկական գրերի ստեղծումով, որով և փաստորեն նոր հոմեի մեջ է դրվում հայոց մտավոր կյանքն առհասարակ: Սեփական գիրն ու գրականությունը դառնում են պետականությունը երկար ժամանակ կորցրած հայ ժողովրդի համար ազգային միասնության կարևոր գործոն, Մանուկ Աբեղյանի դիպուկ բնորոշմամբ, «ընդհանուր հոգևոր կյանքի, համազգային միությունն պահպանելու և նույնիսկ դեպի ազգային անկախություն հրահրելու ամենամեծ պատմական դործոնը»¹: Համազգային զարթոնքը բարձրացրեց հասարակական ու մշակութային վերելքացի հորդածու մի ալիք, որը, թափանցելով իրականության բոլոր ժալքերը, շրջադարձային նշանակություն ունեցավ հատկապես գաղափարաբանության ոլորտում:

Ժամանակի պահանջով ի հայտ են գալիս մտքի տիտաններ, հոգևոր, քաղաքական և մտավոր կյանքի կազմակերպիչների մի բուլ՝ Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Եղիշիկ Կողբացի, Մովսես Խորենացի, Եղիշիկ, Դավիթ Անհաղթ և ուրիշներ, որոնց մարմնավորած հոգևոր արթնացման բուռն հորձանքն իր բազմադանոթյամբ ու ճոխությամբ առաջին հայացքից ասես թելադրված է առանձին օժտված անհատների կամքով ու մտահայեցողությամբ: Բայց նորահաստատ մի օրինաչափությամբ, որ դառնում է տիրապետող, անհատականն այս խոշոր գործիչների մոտ ընկրկում է համընդհանուր ազգային շահագրգռությունների և հեռահար նպատակների առաջ՝ նրանց գործին ու ստեղծած արժեքներին տալով յուրահատուկ բնույթ ու որակ, որը որոշ դեպքերում առանձին արժեք է ստանում նաև համաշխարհային առումով: Բացառիկ անհատների ստեղծագործական այս թվացյալ անկախությունը իրականում իր հիմքում ենթադրում է ներքինապես կշռադատված հեռաժամ մի ծրագիր, որի առանցքը ազգության քաղաքական-մշակութային ինքնորոշման և գոյատևման

¹ Մ. Արևիկյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 101:

նվիրական գաղափարն էր: Այդ գաղափարի մշտակա առկայությամբ էր հատկառենշվում V դ. սկիզբ առած հայկական մատենագրությունը, որի ներքին՝ շուն ազգային էությունը հարատևեց և բյուրեղացավ հետագա բոլոր դարերում:

Եթե մի պահ թողնենք գրեթե գյուտը, որը, հիշումի, հայ ժողովրդի հոգևոր կյանքում կատարված ամենամեծ հեղաբեկումն է, ապա լուրջ հիմքեր ունենք ասելու, որ ժամանակի մտավոր կյանքում իր խորապես ծրագրային, հետևողական, բազմակողմանի գործունեությամբ ուղենշային եղավ Մովսես Խորենացին, որի վաստակը մարմնավորում է ժամանակի հեղաբեկումների հիմնական առաջընթաց միտումները:

Հայ ժողովրդի համար այս վճռորոշ պահին Խորենացուն՝ իբրև հայրենասերի և արվեստագետի, մեծապես հուզում էր մի կարևոր հարց՝ նորաստեղծ գրականության դիմագիծը, որը փաստորեն ազգային վերածնության նրա ծրագրի հիմնարկներից է: Կրականությունը արժեքավորելով հասարակական օգտակարության տեսանկյունից և գործնականում նրան ստորադասելով վերոնական, դավանաբանական իրողություններ, երբեմն՝ անձնական հակումներ՝ ճաշակ ու նախասիրություն, նա՝ որպես լայնախոհ մտածող, դուրս է գալիս նաև ազգային, սոցիալական ու դասային սահմանափակություններից: Ախտված շենք վրնի, եթե ասենք, որ գրականությունը նրա ազգային ծրագրի նաև գաղափարական նպատակի ընթացիկից է, որի այսօրինակ ազդարարումը հայ դպրության առաջին իսկ քայլերից բնութագրական է Խորենացուն՝ այս հարցում դրսևորած հատակ վարքագծի համար: Հիշումի, պատմահայրն այս ոլորտում ևս հանդես է գալիս թեզեր առաջադրողի և գործնական կիրառողի ներդաշնակ կեցվածքով, կարծես շեշտելու համար, որ իբրև ազգային գործիչ, ինքն իր գաղափարներով և ամենօրյա գործունեությամբ միաձուլվ է: Նա հավատում է հին հույների այն պատկերացմանը, որ արվեստն իր մեջ թաքցրած ունի հոգեկան առանձնահատուկ ներգործություն և զորություն, ծանոթ է արվեստի մոգական՝ գոտեպնդող ուժի մասին ստոիկյան, այլոթագորասյան և արատոնյան փիլիսոփայական դպրոցների տեսություններ: Այս պատկերացման հեռավոր արձագանքները չպետք է արդյոք փնտրել «Հայոց պատմության» մեջ ամենայն հետևողականությամբ փրգադափարատիպ արձանների՝ Արայի, Արամի, Տիգրանի կերպարների մեծ արվեստով կերտումը, ինչպես և հունարենից թարգմանության համար իր մեկ այլ սիշեյի հերոսի՝ Ալեքսանդր Մակեդոնացու փառավոր կյանքին ու քաջագործություններին նվիրված դասական երկի ընտրությունը: Չէ՞ որ, ինչպես Արիանոսն է նկատում, էպիկական և քնարական հեղինակներին, ինչպես և նրանց ստեղծագործությունները կատարողներին մեծ աշխատանք է սպասվում՝ ստեղծել երկեր, որոնցում կփառաբանվեն Ալեքսանդրն ու իր գործերը: Ազգության կենսական խնդիրներին մշակույթն ու դրականությունը ծառայեցնելու իր սկեռուն նպատակադրումով Խորենացին դիմում է նաև համաշխարհային քաղաքակրթության չափազույն արժեքներին, նրանցից վերցնելով այն, ինչ օգտակար և ուսանելի կարող էր ըլինել հայոց հոգևոր կյանքի և պետական-քաղաքական կարգերի վարդապետական համար, քիտականի, թարգմանչի և գործչի աշխատանքով որոշակիորեն օգնելով հիշյալ արժեքների լավագույն յուրացմանը նոր միջավայրում:

Խորենացու քաղաքական ծրագրի առանցքը, հետևաբար և նպատակը ժողովրդին իդեալներ տալու անդամն է: Պատմահոր վաղվա երազանքը իր արտեքներով դարձյալ անցյալում է, որի ծաղեցումն նա պեղում է իր փայփայած հայկական հզոր, բարգառված պետությունն ստեղծող թագավորների կերպարը՝ Արա Գեղեցիկ, Արամ և, մասնավորապես, Տիգրան, որի խորենացիական նկարագիրը՝ անվեհեր, ժողովրդասեր, խոհեմ, ազատատենչ, ներկրը շե-

2 В. Татаркевич, Античная эстетика, М., 1977, с. 178.

3 Арриан, Анабасис, I, II.

նացնող, արդարադատ, չափավոր, որքան ծրագրային է, նույնքան էլ՝ համահունչ միջնադարի հայ մարդու ավանդական բաղձանքներին: Խորհնացին պաղարյուն տարեգիր չէ, և ոչ էլ պատմությունը նրա համար՝ ներկայից թաքնվելու ապաստարան: Պատմությունը նրա պատմափիլիսոփայական կոնցեպցիայում դիտվում է իբրև մի համակարգ, ուր անցյալի սեղ պետք է փնտրել ապագան, քանի որ ժամանակի օղակն անխզելի է: Սեփական զարմի հազարամյա հիշողությունն իր մեջ ամբարած պատմահոր համար անցյալի փորձը ապագայի դաս է: Այդ իսկ պատճառով նա հանձարեղ կանխատեսություններ է դրում եղավ ոչ միայն մեր հեթանոսական բանահյուսության մեջ տարբերակելու ազդեցության պատմական կեցության արձագանքները և նրա բարոյակերպական դասերը (արդյունքը նրա գրառած վահագնի, Հայկի, Տիգրանի, Արտավազդի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Արտաշեսի և Սաթենիկի, Տորք Անգեղի մասին ժողովրդական զրույցներն են), այլև ուրիշ ժողովուրդների անցյալի ներքին հոսանքների ստույգ գնահատությունների միջոցով գործունեություն ծրագրելու նաև իր իսկ ազգի հոգևոր և քաղաքական միասնության համար:

Հերավի, այսօր պատմական մոտեցմամբ հետադարձ հայացքի տակ առնելով խնդիրը, տեսնում ենք հասարակական այն օգտակարությունը, որ պատմագիտական, մանկավարժական, տեսական, թարգմանչական փոր ողջ գործունեությամբ ձրագրված բերում էր Խորհնացին: Այս եղանակով, V դ. թարգմանական շատ իրողություններ և հարակից խնդիրներ, մասնավորապես Ալեքսանդրի պատմության թարգմանությունը կարող են ստանալ նոր, ուշագրավ մեկնաբանություններ: Նշենք, թեկուզ, հայկական գրավոր մշակույթի հետ հելլենիզմի ուրույն յաշաձևման բարեբար ազդեցության անհերքելի փաստը, որ հավաստվում է հայ միջնադարյան գրականության հետագա ողջ ընթացքով:

Խորհնացու փիլիսոփայական-քաղաքական կենցաղյալի, որ արտահայտվել է «Հայոց պատմության» մեջ, շատ ընդհանուր եզրեր ունի և Կալիսթենիսի վերագրված Աղեքսանդր Մակեդոնացու պատմության հետ, որի հանդերձ թարգմանությունը, ինչպես և տեսնենք ստորև, կատարված է պատմահոր ձեռքով և ոչի հետ ունեցած գաղափարական առնչությունը նոր լույս է սփռում նրա կերպարի վրա: Ի մի բերելով Խորհնացու գրավոր ողջ ժառանգությունը, կարող ենք ասել, որ նա կարծես զբղ է մի գիրք, որի տարբեր էջերը գրված են տարբեր եղանակներով, բայց բոլորի նպատակը մեկն է՝ բարոյական և քաղաքական իդեալի արժարժում, պատմության իմաստավորմամբ սերունդների և ժամանակների ժառանգորդական կապի հաստատում, հայրենիքի տրբազան կերպարի արարում:

Ինչ է Աղեքսանդր Մակեդոնացու պատմությունը կամ ինչպես նաև կոչում են՝ Աղեքսանդրի վեպը: Կարճ բնութագրմամբ՝ սա Ալեքսանդր Մեծի ծնունդը, գործը և մահը ներկայացնող հրաշապատում-արկածային-պատմական-գրական և տարաբնույթ այլ դրվագների մի բարձրարվեստ հյուսվածք ներկայացնող երեք գրքից բաղկացած ծավալուն ստեղծագործություն է: Այն մարդկային քաղաքակրթության կերտած պատմամշակութային հնագույն և դասական արժեքներից է, միջազգային լայն ճանաչում գտած երկ, նշանավոր բյուզանդագետ Վ. Տարնի բնութագրմամբ՝ «հելլենիզմի կարևոր նվաճումը»⁴, որն փրկեց նախահաստատ, հերոսական ոգով, թեմատիկ լայն ընդգրկմամբ, գաղափարական և գեղարվեստական կուռ համակարգով և, վերջապես, մարդկային կյանքի իմաստավորման անսքող միտումով երկու հազար տարի անընդմեջ բորբոքում է բազմազգ ընթերցողի սերն ու երեակայությունը՝ կրթելով սերունդների հոգիները և նպատակամղելով նրանց միտքը: Երկը ձևավորվել է հելլենիստական շրջանի Հունաստանում, մ. թ. ա. II—մ. թ. III դդ.՝ Պտղոմեոս կաբիրացու, Արիստոբուլոսի, Կլիտարքոսի, Ստրաբոնի,

⁴ В. Тарн, Эллинистическая цивилизация, М., 1949, с. 263.

Դիողորոս Սիկիլիացու, Պլուտարքոսի, Արիանոսի, Կուրցիոս Ռուփոսի պատմական հավաստի կենսագրություններին զուգահեռ, իբրև հին աշխարհի նշանավոր դեմքերից մեկի, համաշխարհային մի դարաշրջանի ավարտը և մյուսի՝ հելլենիզմի, սկիզբը խորհրդանշող՝ կերպարի՝ Ալեքսանդր Մակեդոնացու նկատմամբ դրսևորված մշտական հետաքրքրություն:

Հուշարձանի հունարեն բնագրի խորագիրն է. Βιοὶς ἸΑεξιμανοῦ τοῦ Μεγεσῆος καὶ Ἰαξιμανοῦ. Երկի կոթիղը՝ հունարեն նախնական բնագիրը, իր սկզբնական տեսքով մեղ չի հասել: Այսօր հրապարակի վրա եղած խմբագրություններից, իբրև բնագրի համեմատաբար հնագույն վիճակ, հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Α (ալեքսանդրյան) խմբագրությունը: Միջազգային ալեքսանդրագիտության վոդմից ընդունված կարծիքի համաձայն, երկի հունարեն նախաբանգրի լրացումն ու վերջնական վերականգնմը անհնար է առանց հայերեն տարբերակի՝ իբրև հնագույն, ամբողջական վավերագրի, համակողմանի համեմատական քննության: Դեռևս անցյալ դարի 2-րդ կեսին կատարված բնագրային համեմատությունները որոշակի դարձրին հայկական թարգմանությունների զրապատմական ընդհանուր արժեքը, մասնավորապես ցույց տվեցին, որ նրանում նախաբանգրի հնագույն և կարևոր կտորների մեծ մասը շատ ավելի կատարյալ է պահպանված, քան հունական Α հնագույն ձեռագրախմբում կամ Յուլիոս Վալերիոսի յատիական թարգմանություն մեջ (IV դ.) և որ հայերենում առկա են նախնական բնագրի այն մասերը, որ անհետ կորած են հունարեն բոլոր գրչագրերում:

Ալեքսանդրի պատմության հայերեն թարգմանության ուսումնասիրության և նրա քննական բնագրերը գիտական հրատարակության պատրաստելու ընթացքում մենք հատուկ զբաղվել ենք նրա թարգմանության ժամանակի և թարգմանի անձնավորության առաջնալին հարցերով, որոնք երկուստեք նշանակություն ունեն թարգմանությունն ըստ էության արժեքավորելու և հայ միջնադարյան գրականության մեջ նրա պատմական տեղը ճշտելու առումով: Բազմաթիվ անհերքելի փաստեր հավաստում են մեր վերը նշած միտքը՝ թարգմանության հեղինակն է Մովսես Խորենացին, որի «Հայոց պատմության»՝ հայ ժողովրդի առաջին ամբողջական քննական պատմության բազմաթիվ աղբյուրներից մեկն էլ Կեղծ-Կալիսթենեսի երկն է: Հենվելով այս երկու հուշարձանների համեմատական ուսումնասիրության վրա, որն ի հայտ է բերում Վեպի հետ բազմաթիվ առնչություններ, թարգմանությունը պետք է կատարված համարել V դ. 80-ական թվականներին, երբ հունարեն դպրոցի առաջնապետների ջանքերով մեզանում իրագործվեցին առաջին թարգմանությունները՝ Դիոնիսիոս Թրակացու քերականությունը, Պիտոլից գիրքը, Փիլոն Ալեքսանդրացու երկերը, Բաբուրախոսը և այլն, երբ թարգմանական և բուն ազգային հուշարձանները հանդես էին գալիս գիրկընդխառն՝ իբրև հոգևոր կյանքում կատարվող արմատական վերափոխումների յուրատեսակ դրսևորում: Դասական այս թարգմանությունը արժեքավոր է մի շարք առումներով: Նրանով է սկզբնավորվում հայ թարգմանական գեղարվեստական արձակի պատմությունը: Այն աշխարհիկ բովանդակության առաջին հայերեն թարգմանությունն է, մեր հին մատենագրության ընդհանուր քրիստոնեական ֆոնի վրա ամրակ հեթանոսական գրքի» թարգմանությունը:

Նվթե երկերը Խորենացու ծննդյան՝ բանասիրության կողմից ընդունված ժամանակից՝ 410 թ., և նրա իսկ թողած նկայությունից՝ «Ես աչր եմ ծեր և

5 А. Б. Р а н о в и ч, Эллинизм и его историческая роль, М.—Л., 1950, с. 22.

6 Հուշարձանի հունարեն ձեռագրերում առկա են խորագրի այլ տարբերակներ ևս:

7 Հ. Տ ա չ ե ա ն, Ուսումնասիրությունը Ստոյն-Կալիսթենեսի Վարուց Ալեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 4—5:

8 Ա. Ս ո լ լ օ Ր յ ա ն, Հոմերական բառգիրք և հոմերական տաղը (Բազմավեպ, 1877, էջ 15—30):

հիւանդոտ և անպարապ ի թարգմանութեանց», որ նա արել է այն պահին, երբ Սահակ Բագրատունին իրեն հորդորում էր շարադրել սեփական ժողովրդի պատմութիւնը, ապա պետք է լռութենէնք, որ փարգմանութեան գործը իրապարհային խորենացին եղել է շուրջ 70 տարեկան: Այնպէս, լուրջ հիւսիսով ունենք պնդելու, որ Վարդապետութիւնը ժամանակագրորէս աշխարհի է «Հայոց պատմութեան» և ուղղակի հետքեր թողել վերջինիս և, առասպառակ, պատմիչի աչք հորինվածքներն մերս: Հանգամանորէն ուսումնասիրելով խորենացու անվան հետ կապվող այս երկու գործերը, հասեմատական ասարակելով իր ջանքերը ամբողջացրել և ի մի ենք բերել ակնարկված առնչութեան կոնկրետ բնագրային վկայութիւնները, որ մասնակիորէն՝ գրեթէ միշտ «Հայոց պատմութեան» առնչութեամբ, նկատել են և մասնագետները (Հ. Տաշյան, Կ. Խալսթյան, Ն. Բյուզանդացի, Ա. Սուքրյան, Մ. Աբելյան, Կ. Սարգսյան և ուրիշներ)՝ իրենց հավանական կամ հաստատ եզրահանգումներով: Նկատենք նաև, որ Պատմութեան քննական տեքստերի պատրաստմանը նախորդած փաստական ողջ նյութի հավաքումը մեզ տվեց ոչ դրվագային, այլ լիակատար համեմատութիւն կատարելու և հետևողականորէն որոշ օրինակափութիւններ գրանցելու եզակի հնարավորութիւն:

Մեր եզրահանգումները՝ խարսխված Աղեքսանդրի պատմութեան աշխարհում հայտնի հայերէն բոլոր 70 գրչագրերի, հունալատինական լատիներէն տեքստերի, մասնավորապէս Կ. Մյուլլերի, Յ. Յախերի, Հ. Մյուլլերի՝ Փարիզում, Հալլեում և Լայպցիգում անցյալ դարի երկրորդ կեսին իրագործած արժեքավոր հրատարակութիւնների, մասամբ նաև ռուսական, սերբական ու այլ վերսիաների տվյալների վրա, վերաբերում են հայերէն թարգմանութեան միջազգային ու հայագիտական նշանակութիւնն արծարծող հիմնահարցերին: Հիշեցնելով, Պատմութեան ձեռագրերի՝ մեր կատարած քննարկատական քննութիւնը փաստական լուրջ հիմքի վրա այսօր հաստատում է եվրոպական հայագիտութեան և ալեքսանդրագիտութեան (Հյուրըման, Վետերման, Մյուլլեր, Յախեր, Ռյուսիսկի, Բաումգարտներ և այլն) արծարծած և բյուզանդագետների նորագոյն ուսումնասիրութիւններում հաստատվող այն վաղեմի միտքը, որ հայկական թարգմանութեանը ներկայացնում է հոնարեն բնագրի հնագոյն՝ ալեքսանդրյան վիճակը, անխաթար պահպանվ նրա այն կարևոր մասերը, որոնք հոնարեն բոլոր ձեռագրերում անհետ կորած են, իսկ Յուլիոս Վալերիոսի լատինական հնագոյն փաթագրութեան մեջ՝ աղճատված ու պակասավոր: Ուստի և այն իր էութեամբ, կատարելութեամբ և լրիվութեամբ որոշակի հիմքեր է տալիս հոնարեն նախաբնագրի վերահանգման և ամբողջականացման համար: Մա, այսպէս ասած, փնդրի ընդհանուր բանասիրական կողմն է, այն նպաստը, որ երկի խորենացիական թարգմանութեան ուսումնասիրութիւնը բերում է մասնավորապէս բյուզանդագիտութեան ասպարեզում:

Ձգտելով կոնկրետութեան, ստորև մատնանշում ենք հայերէն տեքստերի այն կետերը, որոնք, ըստ մեր դիտարկումների, հիմնավորում են վերը բերված եզրահանգումները.

ա) Որոնցով կարելի է լրացնել սրբագրել և ուղղել հունարենը (Պատմութիւնն Աղեքսանդրի Մակեդոնացու, հայկական խմբագրութիւններ, աշխատասիրութեամբ Համիկ Սիմոնյանի, Երևան, 1989, ժան. 41ա, 77, 162, 183, 185, 207, 232, 254, 295, 303, 308 և այլն),

բ) Որտեղ հայերէնը ավելի լրիվ ու ստույգ է, քան մեզ ծանոթ հունարեն տեքստերը (ժան. 41 գ, 43, 237 և այլն),

գ) Որտեղ հայերէնը համընթաց է հունարեն A հնագոյն բնագրին և սրբագրում է հոնարեն B բնագրին ու լատինական վերսիան, որոնք աղավաղված են (ժան. 60, 303 և այլն),

դ) Որոնք վկայում են հայերէնի կապը հունարեն C բնագրի հետ (նույն տեղում, ժան. 19, 409),

ե) Ուր հայերէնը, համաձայնելով լատիններէն վերսիային, պահպանել է

առկա հունարեն որոշ տեքստերում բացակայող իրողություններ, որ վարևոր են հունարեն նախաբնագրի ճշտման համար (ծան. 42, 59, 61, 177):

Հետազոտական նույն մեթոդի հետևողական կիրառությամբ ըստ հունալատինական նախաբնագրերի վերականգնված են հայկական բնագրերում առկա մի շարք աղավաղումներ (ծան. 15 և այլն), ճշգրտված են Թարգմանություն մեջ հայկական բնագրային հավելումները (ծան. 16, 171 և այլն):

Թարգմանության լեզուն ուշագրավ է հատկապես հայագիտության համար: Կենսական լայնակությամբ նյութով և աշխարհիկ-հերոսական ոգով հատկանշվող այս երկի Թարգմանությամբ Խորենացին ոչ միայն ընդարձակեց մեր հոգևոր աշխարհի սահմանները, այլև մեր դպրության արշավույթին ի դուրս եղավ վերարտադրելու նախաբնագրի բառապաշարի հարստությունը, խնամակերպ կառուցվածքը, պատկերային սիմվոլիկան: Շեշտելով Թարգմանության նորանշան հանգամանքը, Հ. Տաշյանն այն բնութագրում է իբրև «ճարտար և կոռուլի գրչի քիտած», որը, «թեպետ օտարացած տեղ-տեղ հելլենարանություն», միշտ «կցուցնե հայ լեզվին վենդանություն ու ոգին, զոր գուր է փնտրել հաջորդ դարուց մեջ»⁹: Ըստ Մ. Աբեղյանի, այստեղ գործ ունենք «սակավադեպ հունաբան լեզվով» «ընտիր հայերենի» հետ¹⁰:

Ինչ վերաբերում է Աղեքսանդրի վեպի և «Հայոց պատմության» վոնկրետ առնչություններին (ավելի քան 30), ապա պարզվում է, որ առկա լեզվական բացահայտ ընդհանրությունները միաբնույթ չեն: Դրանք

1. Նույնական բառեր են՝ Թարգմանության ընթացքում ատեղծված նոր բառեր, երբեմն հունարեն նախօրինակի լեզվական պատճենումներ, որոնց մատենագրական ալլ կիրառություններ հայտնի չեն և բառարաններում գրանցված են սուսկ Աղեքսանդրի պատմությունից և «Հայոց պատմությունից» քաղված նույնական եզրերի օրինակներով: Նշենք, թեկուզ, «աթերայ», «տուրի» փոխառությունները հոսնարենից, որ Խորենացին օգտագործում է նաև իր «Հայոց պատմության» մեջ, ձեռքի տակ ունենալով վեպի համապատասխան հատվածը՝ իր իսկ Թարգմանությամբ: «Աթերայ» բառը (ἀθήρα) «փոխինդ, խլուս, կերակուր» նշանակությամբ վեպում հանդիպում է «Բաշխումն առնել աթերացն» դարձվածոմ: Նկատի է առնված հին եգիպտացիների տոներից մեկը, որի ժամանակ քլիթներ, կարկանդակներ էին բաժանում: Ի դեպ, վեպի Թարգմանիչ Խորենացին «աթերան» նույնությամբ օգտագործել է «Հայոց պատմության» մեջ՝ «աթերաց առնել բաշխումն» նույնական դարձվածում՝ որոշակի դժվարությունների առաջ կանգնեցնելով իր հրատարակիչ-մեկնիչներին և Թարգմանիչներին: Այսպես, էմիլը լատերեն Թարգմանիչով ПИРОГ, «Հայոց պատմության» կցած ծանոթագրություններում հատուկ անդրադառնում է լինդրին, նշելով, մասնավորապես, Սեն-Մարտենի վրած դժվարությունները բառը ֆրանսերեն Թարգմանիչիս: Բանասերի վարժիքով, ֆրանսիացի գիտնականը ենթադրությունների մեջ չէր խաբարի, և նրա համար հատվածը կլիներ հասկանալի, եթե վերջինս ծանոթ

⁹ Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 2:

¹⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 123: Հարկ է նշել, որ Աղեքսանդրի պատմությունը, հայկական հոդում գոյատևման իր ողջ ընթացքում՝ ավելի քան 1500 տարի, ըստ ամենայնի տեղափոխվեց, լեզվական առումով ևս Լեթարկվելով նշանակալի փոփոխությունների: Թարգմանության դասական հայերենին շերտ առ շերտ գումարվեցին միջին հայերենով, ժամանակի խոսակցական լեզվով և տարբեր գավառաբարբառներով ստեղծված հետագա բաղմաթիվ հավելումներ, չափածո և արձակ ընդմիջարկություններ, որով և, ըստ Պատմության առաջին հայ խմբագիր Խաչատուր Կելառեցու (XIV դ.), «անխոտորնակ ճանապարհ» էր բացվում դեպի միջնադարի հայ ռամկախոս ընթերցողը: Սիրված, բայց մոռացության մատնված գրքին երկրորդ կյանք պարգևելու մղումով հոստորական պերճախոսությամբ օժտված Խաչատուր Կելառեցին և նրա հետնորդներ Գրիգորիս Աղթամարցին, Զաքարիա Գնունեցին (XVI դ.) և ուրիշներ բնագիր ներմուծած իրենց հատուկ երգերի՝ կաֆաների համար ընտրում են «ռամկաբանություն» խառը միջին հայերենը:

լինելու եզրակացության դիցարանի ավանդություններին¹¹, այսօր ավելացնենք, նաև՝ Աղեքսանդրի պատմության հայերեն թարգմանությանը, որի խմացությունը, ինչպես դժվար չէ համոզվել, մեծապես օգնում է պատմահոր երկի առկա իրողությունները բացատրելուն: Խորեն Ստեփանեն «աթերան» թարգմանում է «խմորեզներ»՝ խորենացու «Հայոց պատմության» ծանոթագրություններում ինքը ևս անդրադառնալով Սեն-Մարտենի թարգմանական դեգերումներին¹², Ստ. Մալխասյանը նախընտրում է «կարկանդակ» հոմանիշը՝ հատուկ նշելով, որ կարկանդակները բաժանելը Տուբի 22-ի տոնի մասն է կազմում¹³, ի դեպ, խորենացին «Հայոց պատմության» էջերում Ալեքսանդրի քաղաքի նկարագրության մեջ երկու անգամ օգտագործում է Աղեքսանդրի պատմության մեջ հանդիպող «Տուբի» բառը, որ եզրակացության օրացույցում նշանակում է «հունվար» (Tubi): Ըստ Ստ. Մալխասյանի, այս կետում ևս խորենացու աղբյուրը ակնհայտորեն Կեղծ-Կալիսթենի երկն է, մասնավորապես նրա այն հատվածը, որից իր «Հայոց պատմության» մեջ Ալեքսանդրի քաղաքի նկարագրության համար քերթողահայրը բառացի բանաբաղություններ է արել:

2. Ընդհանրությունների հաջորդ խումբը կազմում են բառացի նույնությամբ լեզվաբանական դարձվածներ, բառակապակցություններ, լեզվական բնութագրումներ, ոճեր և այլն, որ խորենացին, ինչպես նկատված է, համարություններ վերցրել է Աղեքսանդրի պատմությունից: Այս կարգի ընդհանրությունները շոշափելի են հատկապես խորենացու «Աբղարի: թղթերի» մեջ, որտեղ բառացի նույնություններն այն աստիճան նկատելի են, որ նրանցից մեկի՝ «Ո՛ղջ լինել ձեզ, ըղձամ» կրկնվող դարձվածի առիթով թույլ են տվել նույնիսկ ասելու, թե խորենացին այս նախադասությունը «ճարտարապետաբար գողցած է Աղեքսանդրի Վարդաց մեջէն»¹⁴: Մեկ այլ օրինակ՝ «հանգոց ի հանգոցէ» դարձվածը՝ «այս անսովոր ոճը», որ անցյալում իր վրա է բեռնել մասնագետների ուշադրությունը՝ բացառապես իբրև Վեպի հետ խորենացու դրսևորած լեզվական ընդհանրությունն ևս մի ուշագրավ փաստ: Պատմահայրը, ինչպես նա այդ անում էր ոչ սակավ դեպքերում, Վեպից պատշաճ հարմարեցումով վերցրել է իրեն պետք լողած հատվածը՝ «Բայց զնոյն ինքն զԴանոհ գիշերն ապրեցոյց և առ այսոքիւր ձի կալեալ բազում և նոր, ի հանգոց ի հանգոցէ փախչէր: Եւ մակեդոնացիքն, հասեալ ի կողմն պարտից» բանակէին և մէջ գիշերի եղեալ ի վերայ դիականցն աւթագանէին»¹⁵: Այն «Հայոց պատմության» մեջ ունի հետևյալ տեսքը. «Եւ Երուանդ ձիով իւրով բովանդակ ասպարէզս անցեալ՝ ելանէ ի վասնս կարգեալս ի բանակն իւրմէ ի քաղաքն իւր, հեծեալ ի նոր ձիս հանգոց ի հանգոցէ փախչել. ...Եւ Մարաց զօրացն անցեալ ի կողմն երուանդական գնդին, նսեմալ ի վերայ դիականցն բանակէին, իսկ Արտաշէսի հասեալ ի Երուանդայ շրջապատեալ առագաստն... էջ և ի խորանի նորա բնակեցաւ զայն գիշեր»¹⁶: Ստ. Մալխասյանը «Հայոց պատմության» աշխարհարար իր թարգմանությանը կցած ծանոթագրությամբ, առանց նախորդներին անդրադառնալու, հայտնում է նույն միտքը, գրելով. «Այս ան-

¹¹ История Моисея Хоренского, Ереван, 1958, с. 326.

¹² Մովսես Խորենացու հայկական պատմություն, աշխարհարար թարգմանեց և լուսարանեց խորեն ծայրագույն վարդապետ Ստեփանե, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 276:

¹³ Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհարար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 528:

¹⁴ Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 52:

¹⁵ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացու..., Երևան, 1989, էջ 160:

¹⁶ Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, II, ԽՁ, հմտ., Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 49:

սովոր ոճը պատահում է միայն այստեղ և Կեղծ-Կալիսթենեսի Աղեքսանդրի վարքում, որ համարվում է դարձյալ Խորենացու թարգմանություն¹⁷։

3. Եղակի չեն և ծավալուն նկարագրությունները, որ Աղեքսանդրի պատմությունից նույնությամբ փոխանցվել են «Հայոց պատմության» հյուսվածքի մեջ՝ հարմարեցված վերջինիս սյուժեին սոսկ հերոսների և տեղանքների համապատասխան փոփոխությամբ (տե՛ս, օրինակ, Աղեքսանդրի հոր՝ Փիլիպոս 2-րդի ու Կլեոպատրայի հարսանիքի և Բակուր իշխանի խնջույքի, Թերեոսի հիդրանակերտ քաղաքների առման, Աքիլլեսի՝ Սկամանդրոս գետը ոստնելու և հայոց վարազդատ թագավորի՝ Եփրատը լողալով կտրել-անցնելու հատվածները և այլ նկարագրություններ, որ բացահայտորեն հուշում են «Հայոց պատմությունը» շարադրելիս պատմիչի ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրը՝ Աղեքսանդրի պատմությունը։

Եվ, վերջապես, ուշագրավ են երկու հուշարձանների գաղափարական ընդհանրությունների առարկայական վկայությունները, որ սեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել։ Առաջինը Պատմության հնագույն տեքստերին կցված հայկական մի վաղեմի հավելում է՝ մահամերձ Աղեքսանդրի դիմաձևի իր զինվորներին, այսպես կոչված, «Աղեքսանդրի խրատը», որը, երևելով համանման ուրիշ հավելումների նկատմամբ վերջինիս դրսևորած լեզվաոճական բացահայտ տարբերությունից և, մյուս կողմից, Խորենացու «Հայոց պատմությունը» եզրափակող «Ողբի» հետ բովանդակային-գաղափարական ակնառու ընդհանրությունից, դիտում ենք Խորենացու գրչի գործ։ Պետք է նշնթաղել, որ հասարակության բարոյական մաքրագործումը իր քաղաքական ծրագրի հիմնահարցերից մեկը համարող Խորենացին, չբավարարվելով «Ողբում» շարադրած դրույթներով, նույն միտքն է շեշտում և «Աղեքսանդրի խրատում», դրանով իսկ գաղափարական նոր լիցք և ավելում հաղորդելով իր իսկ թարգմանած ստեղծագործությանը։ Երկու սեպքում էլ հասարակական տարբեր խավերի քննվող հատկանիշները և նրանցից մակաբերվող էթիկական գաղափարականները նույնն են։

Երկրորդ օրինակը վերաբերում է Պատմության մեկ այլ հայկական հավելման՝ բարաոնություններին, որոնք իրենց զուգահեռներն ունեն Խորենացու անվան հետ կապվող Պիտոյից գրքում։ Այս առնչությամբ քերված փաստաթղթերը (2. Տաշյան) զուրկ չեն որոշակի հետաքրքրությունից և կարիք ունեն լրացուցիչ հիմնավորումների և ձեռագրական նոր վկայությունների։ Ավելին, հատուկ քննություն է պահանջում այդ երկու հնագույն հուշարձանների լեզվական մեծ ընդհանրությունը՝ քանի որ նրանցում վկայված լեզվական որոշ խրդողություններ թույլ են տալիս ենթադրելու, որ դրանք ստեղծված են Խորենացու կողմից՝ Կալիսթենեսի երկի թարգմանության ընթացքում։

Նպատակ չունենալով միջամուխ լինել Խորենացու թարգմանչական գործունեության բոլոր կողմերին, նկատենք միայն՝ Աղեքսանդրի պատմության շուրջ 70 հրապարակի բառաքնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ V դարում, երբ մեր նորաստեղծ դպրության լեզուն կարիք ուներ սնուցման նոր և առատ աղբյուրների, հուշարձանի թարգմանության միջոցով Խորենացին գորաբար բառազանձը հարստացրեց տասնյակ բառերով։

Դրանք փոխառություններ են հունարենից. գալլոս (γαλλος—թերի, պակասավոր), քսիստին (ξέστης—բաժակ, ջրաման), հորմայ (ορμος—շղթա, մանյակ), սկիւտաղ (σχιταλή)—1. գավազան, 2. օձի տեսակ, 3. պարուրածև ուղեբձ), լուգիդաս (λουγιδος—ձկան տեսակ), լիբեոնայս (λεβονις—լիբոնական թիթև նավ), բիրդոս (βιρδος—պապիրուսի կեղև, գիրք, կնիք) և այլն։ Սրանցից մի քանիսը, ինչպես ցույց է տալիս հունահայկական բնագրերի համեմատությունը (օրինակ, «կանափնիտով» բառը), հունարենում աղա-

17 Մովսես Խորենացու Պատմություն Հայոց, էջ 494։

վաղված է: Այս դեպքում ևս հայերենը անփոխարինելի սկզբնաղբյուր է Պատմության հունարեն նախաբնագրի սրբագրման համար:

2. Իրանի նաև բառապատկերներն են, որոնց զգալի մասը, իբրև թարգմանության ժամանակ ստեղծված իրողություններ, հաստատապես մտել է հայոց լեզվի բառապաշարի մեջ, արմատավորվել և յուրատեսակ քննություն բռնել մատենագրական նորանոր վկայություններով: Հազիվ թե գտնվի միջնադարյան մի հեղինակ, որ օգտագործած չլինի «ցլագլուխ», «գուարակագլուխ» անվանումը՝ Ալեքսանդր Մեծի նշանավոր մարտական նժույգի հորջորջումը, որ հունարեն *αλεξάνδρου* (լատիններեն *alexandru*) հաջող պատճենումն է: Հիշենք նաև միջնադարյան հայ գրականության մեջ լայնորեն շրջանառու, «մերկրիմաստաւէր» բառը՝ պատճենված հունարեն *μερκευ* (հայերէն *միւրկիւ*) բառից: Թեպետ ոչ ուղղակիորեն բառապատճենումները ևս այսօր նպաստում են երկի հունարեն նախաբնագրի ճիշտ ընկալմանը և ճշգրտմանը: Օրինակ, *αλεξάνδρου* որից էլ պատճենված է «վայրաբեր» բառը, հունարեն BC հնագույն լեզուագրություններում աղավաղված է: Հայերենը, լիովին համընկնելով լեզվական ձևագրին, հաստատում է իր անաղարտությունը և լիակատար հիմք տալիս հունարեն բնագրի նաև այս կետի սրբագրմանը: Բառի այս հնագույն, ինքնահատուկ կիրառությունը՝ «վայրահայաց» իմաստով, ցավոք, վերաբեր է նոր հայկազյան բառարանի ուշադրությունից:

Վեպի թարգմանությանն ենք պարտական նաև «շրամղահոս» բառը՝ «շրմուղ, ջրանցք, ջրատար առու» իմաստով, ինչպես նաև մի շարք այլ, անսովոր իմաստներով բառեր՝ հորինված երկի հայացման ընթացքում, նյութի թելադրանքով: Դրանք կիրառվել են հրաշապատում նկարագրություններում՝ ֆանտաստիկ երևույթները կոչելու համար թարգմանողից պահանջելով ոչ միայն լեզվաշինական որոշակի տաղանդ, այլև ստեղծագործական երևակայություն և անդուլ աշխատանք: Այդ եղանակով ստեղծվել են գիշերաղուէս, շնակաքի, եզնախոյ, գուարափիլ, ճակգարան և այլ բառեր, որ գրանցվել և Պատմությունից քաղված օրինակներով պատշաճորեն մեկնաբանվել են նոր հայկազյան բառարանի համապատասխան բառահոգվածներում: Առկա տվյալներով, Աղեքսանդրի պատմության թարգմանության հետ կապված իրողություններից է «վարազափողոց» եզակի բառը, որը համաձայն այլ բառերի հետ կրում է թարգմանչի անհատական ոճի որոշակի նշանները, և որին նոր հայկազյան բառարանի տված տառադրությունը՝ «լայն և ընդարձակ փողոց», Վեպի հայերեն ձևագրերի տվյալներից առկա կարող ենք լրացնել և կոնկրետացնել՝ իբրև «շուկա ծառայող լայն փողոց»: Ի դեպ, այս և այլ ճշտումները և լրացումները, որ հարակից կատարել ենք հայոց լեզվի ամենահեղինակավոր բացատրական բառարանների և Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» առանձին բառահոգվածների առնչությամբ, իրենց հետ բերում են նաև վերջիններիս հետևությունները՝ թյուրիմացության մեջ ընկած հրատարակիչների և հետադոտողների առաջադրած որոշ ստուգաբանությունների ուղղում, ինչպես և հնարավորություն տալիս ճշգրտել գրաբարյան մի շարք հնագույն ու հազվագյուտ բառերի նրբիմաստներն ու վաղեմի կիրառությունների հնության աստիճանը: Եվ վերջապես, քանի որ հուշարձանը թարգմանվելուս պես ընդունվել և երկար ժամանակ ակտիվորեն գոյատևել ու ստեղծագործաբար յուրացվել է գրական որոշակի շրջաններում՝ միշտ լինելով հայ մատենագիրների տեսաբանություն, ապա ուսումնասիրողության նոր երակներ կարող է բացել նաև հայ պատմիչների ու տաղերգուների ստեղծագործությունների հետ համապատասխան հայեցակետով նրա լեզվական աղեքսանդրի քննությունը: Հիշելի, հայ դպրության արշալույսին խորենացիական դասական թարգմանությամբ Աղեքսանդրի պատմությունը հաստատորեն մոտեց գործեց հայ գրական աշխարհ, դառնալով ազգային գրականության անկապտելի մասը, շարունակաբար նորացվելով, թարմացվելով, համընթաց գնալով հայ ժողովրդի հոգևոր պահանջմունքներին: Արդեն V դ. և այնուհետև այն այնքան հանրահայտ էր, որ շատ հայ

հեղինակներ (Ղազար Փարպեցի, Թովմա Արծրունի, Սեբեոս, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Ասողիկ և այլն) վկայակոչումներ էին անում նրանից՝ առանց աղբյուրը նշելու:

Խորենացին իր թարգմանությունում սկիզբ դրեց մշակութային մի նոր հոսանքի: Աղեքսանդրի պատմությունը հայ ժողովրդի անփականությունը դարձնելու նրա փորձը շարունակեցին Խաչատուր Կեչառեցին (XIV դ.) և Գրիգորիս Աղթամարցին ու Ջաքարիա Գնունեցին (XVI դ.)՝ երկի հայ խմբագիրներն ու ժողովրդականացնողները: Կեչառեցին 900 տարի անց, իբրև պատմահոր հետևորդ և գաղափարակիր գործընկեր, ձեռք է մեկնում նրան՝ գործունեության սեփական եղանակներով իրագործելով Վաստմահոր (ծրագրի շատ կետեր, Կեչառեցիական «տիպ և գաղափար արքա» բանաձևը, որ նա ձևակերպել է Աղեքսանդրի պատմությանը կցած սեփական ճանապարհություն¹⁸ կոչվող հիշատակարանում, ըստ հոսթյան, Խորենացու քաղաքական իդեալի արձագանքն է: Թագավորներին և իշխաններին տված Կեչառեցու գնահատականներում գործում է Խորենացու՝ հասարակական օգտակարության մոդելը: Ուստի և չպետք է այս երկու գործիչներին քննել պարզ ժամանակագրական կարգով, իբրև ինքնակա արժեքներ: Պետք է տեսնել գաղափարական ալի կապերը, որ հոգեհարազատ են դարձնում նրանց, այն է՝ երազների թագավորի իդեալն իր անհրաժեշտ հատկանիշներով, անցյալի փորձի դաստիարակչական նշանակությունը, օտար հուշարձանների հայկականացման անհրաժեշտությունը: Եթե Խորենացին թարգմանեց Աղեքսանդրի պատմությունը, ապա Կեչառեցին իր հետևորդներով մեկնաբանեց, բանաստեղծական, նկարչական և այլ չրացումներով այն նորովի մատուցեց ժամանակի ընթերցողին: Ազգային ծրագրի գաղափարական ընկալումը և նրա հետ ստեղծագործական ամենառազմալի կապերի առկայությունը և՛ Կեչառեցու, և՛ նրա հետևորդների՝ Գրիգորիս Աղթամարցու ու Ջաքարիա Գնունեցու կերպարներին նոր խմատ ու փշիռ է հատկացնում: Դրանք հարստանում են մի ներքին՝ ավելի հարուստ բովանդակությամբ, որ դուրս է սոսկ գրական շրջանակներից:

Եվ, վերջապես, Աղեքսանդրի պատմության թարգմանությունը մեզ՝ հայերիս համար թանկ է նաև մեկ այլ կարևոր առումով: Բնագրի ուսումնասիրությունից պարզվում է, որ V դ. ընտիր թարգմանությամբ մեզ են հասել նաև նրանում առկա համերոսյան որոշ տողեր, որ, ինքնին հասկանալի է, բանասիրական շարքային իրողություն համարելը արդարամիտ չի լինի: Փաստորեն XIX դ. Մխիթարյան հայրերի կատարած ամբողջական թարգմանություններից շատ առաջ խորենացիական թարգմանությամբ հայ ընթերցողն արդեն ժանրի էր «իշխական» որոշ կտորների: Իբրև հունական էպոսից միջնորդ աղբյուրի միջոցով ավանդված հնագույն կոնկրետ փկայություններ, բնական է, որ դրանք պետք է մեծապես հետաքրքրեն և՛ թարգմանական գործի ակունքները հետազոտողին, և՛ հոմերագիտությանը, և՛ Խորենացու հիտաբարձրմանական գործունեությամբ զբաղվող մասնագետներին: Ցավոք, բանասիրության մեջ այս փնդիրը դեռ պատշաճորեն չի արժարժվել: Ո՛չ Վեպի վենետիկյան հրատարակության, ո՛չ Հ. Տաշյանի մանրախույզ ուսումնասիրության մեջ չի նշված համերոսյան այս կարևոր մեջբերումների հեղինակային բուն աղբյուրը: Պատահական չէ, որ մեջբերումներից մեկը¹⁹, որը յուրատեսակ ճշգրտական հրահանգ է, անտիկ դրականության ու մասնավորապես, Հոմերոսի երկի բարոյակրթական ներքին խորհուրդը բարձր գնահատող Խորենացու տգուժ հարազատ լինելով, տեղ է գտել և վերջինիս անվան հետ կապվող «Պիտոյից գրքում», ծառայելով հասարակական օգտակարության նրա սկզբունքին: Երկրորդ մեջբերումը՝ խորենացիական վաղեմի

¹⁸ «Ճանապարհություն» հիշատակարանի տեքստը ամբողջությամբ տե՛ս Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու..., էջ 493:

¹⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 514:

Թարգմանությունը իր գրվածքներում բազմիցս օգտագործում է Դրիգոր Մագիստրոսը²⁰։ Թարգմանության բուն արժեքը հիացմունքով շեշտել է և հմուտ հոմերագետ ու թարգմանիչ Եղիա Թումանյանը, որը «Իլիականին» կցած իր ծանոթագրություններում այն հանդիպադրում է Վիրգիլիոսի, Օվիդիոսի, Օվրագիոսի և այլոց թարգմանություններին՝ վերջիններս գիտելով իբրև թերի, թերևս գեղեցիկ, բայց ոչ հոմերոսյան տողերի ճշգրտությունն ու գեղեցկությունը վերարտադրող²¹։

Այսպիսով, հորենացին իր թողած գրավոր ժառանգությամբ իբրև ինքնօրինակ «Գիրք ճանապարհի» ոչ միայն նախանշեց հայ պատմագրության հետագա ընթացքն ու դեմքը, այլև մշակեց գիտական ու գործնական ակզորունքներ բնագրին համընթաց, իմաստային ու գեղարվեստական առումով նախօրինակին համարժեք թարգմանություն կատարելու ձևեր ու եղանակներ, որոնք հենց ինքը գրեց ընթացքի մեջ իր գործով։ Լեզվաշինության առաջադրում նա մշակեց բառաստեղծման, ոճերի, քերականական ձևերի չափունիշներ՝ գործնական անժ նպաստ քերելով ազգային լեզվի զարգացման ընթացքին, ընդարձակելով ժողովրդի գեղարվեստական մտածողության սահմանները և նշանավորելով V դարում մեր քաղաքակրթության նոր աստիճանը։

МОВСЕС ХОРЕНАЦИ КАК ПЕРЕВОДЧИК

А. А. СИМОНЯН

Р е з ю м е

Множество неопровержимых фактов дает нам основание утверждать, что автором знаменитого перевода «Повести об Александре Македонском» Псевдо-Каллисфена был Мовсес Хоренаци, использовавший это произведение в качестве источника для своей «Истории Армении». Сравнительное изучение этих двух памятников выявило многочисленные идейные, художественные, языковые, стилистические связи «Истории Армении» с Повестью, что позволило датировать перевод 80-годами V века. Надо полагать, что перевод хронологически предшествовал «Истории Армении», оказав тем самым влияние на последнюю.

Лексический анализ всех семидесяти рукописей Повести показывает, что Хоренаци обогатил древнеармянский язык (грабар) десятками новых слов, а именно: заимствования с греческого, кальки, новые, нередко уникальные, слова, созданные в процессе арменизации Повести.

Примечательно и то, что через этот классический перевод V века задолго до полных армянских переводов Гомера до нас дошли некоторые строки из «Илиады».

²⁰ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 543—544։

²¹ Նույն տեղում, էջ 544։